

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15706

Ա. ՄՈԱՎՅԱՆ

ՄԵԿ ՏԵՂԻՆԻ ՏԱՐԻ ԱՌԱՑ

ՊԵՏՀՐԱՏ

1925.

321.8

Ա-93

20 SEP 200

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԵԼԻԱՆՑԿԱՆ ԽՈՐՃՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԼԱՏԱՑՄԱՆ ՅՈՒՆԻ յարկանիշի, միացելը.


15 JAN 2010

321.8

Մ-93

Ա. ՄԻԱՎՅԱՆ

≡ՄԵԿ ՏԱՐԻ≡
ԱՌԱՆՑ ԼԵՆԻՆԻ



+3K26

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ—Խ. 206.

Յերեվան—1925.

04 JUL 2013

15706



Տիրաժ 10,000

Պետական յերկրորդ տպարան Յերևանում



Մի տարի առաջ, 1924 թ. հունվարի 21-ին, մեք շարքերից ընդմիշտ հեռացավ ՎԱՀՆԻՄԻՐ ԽԵԶԻԶ ԹԻԼՅԱՆՈՎ—ԼԵՆԻՆԸ, Խորհրդային Միության և համայն յերկրագնդի մարտնչող բանվորների ու ազգատ գյուղացիների իմաստուն առաջնորդը։ Այս կորուստը խոր սուպի մեջ գցեց աշխատավոր մարդկությունը և ուրախություն առաջացրեց թշնամի բանակում, բուժուաների, կալվածատերերի և բոլոր տեսակի շահագործողների ու նրանց ծառայողների շքջանում։

Ընկ. Լենինի մահվան որերին Գրանսիական բուրժուական մի հայտնի թերթ ուրախության փըրփուրը բերնին այսպիսի տողեր գրեց. «Սովոհար մասսաների հովվապետի մտնը հուսալքում և պահճիկա պիտի առաջացնի այդ մասսաների մեջ։ Սրբազն հովվապետի մահից չեն անցնի յերկար ամիսներ և նրա կառուցած արհեստական պետականությունը կը խորտակվի»։

Մոտավորապես այսպիսի խոսքերով կոտարեց Գրանսիական բուրժուական թերթն իր ծակ մարդարեսությունը՝ Բուրժուապամիշշան միլիոնավոր Գրանսիացիներ յերեխ համատացին այս մարդարեսությանը։ Բայց այսոր, ընկ. Լենինի մահից 12 ամիս անց, նույն այդ Գրանսիացիների և մարդարեսություն անող թերթի աշքը ծակելով՝ Ֆրանսիայի մայրաքաղաք Պարի գումար, նախկին ցարական գենովանության շենքի վրա, հպարտ ծածանում և Խորհրդային Միության կարմիր գրոշակը։



Վերջին ամիսների ընթացքում իմպերիալիստական ֆրանսիան ստիլված եր ճանաչել Խորհրդային Միությունը և Պարիզ ընդունեց նրա լիազոր ներկայացուցիչ հին բայլընկեր ընկ. Կրասինին:

Այս մի հատիկ փաստն ել բավական և համոզվելու համար, թե ինչքան հիմար ու անհեռաւես են բուրժուական պառաված մարդարեները, յերբ նրանք փորձում են գուշակություններ անել Խորհրդային Միության ազագայի մասին:

Հակառակ բուրժուազիայի սպասումների, խորհրդային իշխանությունը ընկ. Լենինի մահից հետո ապրեց, պահպանեց իր գոյությունը, և այս մի տարվա ընթացքում ունեցավ թե քաղաքական և թե արևտեսական ու կույլտուրական ֆրոնտներում մեծ զրավումներ, անջնջելի հաղթանակներ: Այդ ստիլված յեղակ խոստովանել անգամ անդիմական հայտնի կապիտալիստ Ռեկվարտը:

Բայց խորհրդային իշխանությունը դեռ շատ անելիք ունի: Մեր թշնամիներից ավելի մենք ենք գիտակցում մեր պակասությունները, մեր անելիքները:

Իսկ այսոր, ընկեր Լենինի մահվան տարեդարձին, պետք ե նայենք մեր շուրջը, կը ունիք շրջապատի պայմանները, հաշվի առնենք ունեցած զրավումները, նիշենք հետագա անելիքները:

Մի քիչ զրաղվենք այդ աշխատանքով:

ԽՈՐՀՄԴԱՅԻՆ ՄԵՌՈՒԹՅՈՒՆ ՄԻԶԱՋԴՐԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընկ. Լենինի մահից ընդամենը մի քանի որ հետո անգլիական նոր կառավարությունը, վորի վարչապետն եր մենշենկ Ռամզեյ Մակրուսյլդը, իրավաբանություն ճանաչեց խորհրդային իշխանությունը: Այս ակտից քիչ անց նույնպիսի հայտարարություն կատարեց նաև իտալիայի ֆաշիստական կառավարությունը: Մինչ այդ խորհրդային իշխանությունն իրավաբանորեն ճանաչված եր մի շարք փոքր ու միջակ պետությունների կողմից միայն, յեթե չհաշվենք Գերմանիան, վորի քաղաքական կշիռն այժմյան Յեվրոպայում մեծ չե: Այսպիսով տեսնում ենք, վոր չնայած բուրժուական թերթի վերը հիշած և ուրիշ նման գուշակությունների, անգլիական և իտալիական իրատես կառավարությունները հրաժարվում են իրենց անցյալ բացարձակ ժխտողական քաղաքականությունից և ընդունում խորհրդային իշխանության որինականությունը: Խորհրդային Միության տնտեսական անընդապառ հարստությունները (վոր զեռ չեն ոգտագործվում), նրա համար գոյությունը, անտեսական կյանքի վերականգնման գործում ունեցած հաջողությունները, Կարմիր Բանակի ուժը և այլն—այդ բոլորը այնքան համար վաստեր են, այնքան համոզիչ յեվրոպական բուրժուազիայի համար, վոր նա լսում է իր շահերի լեզվին և զիւլումատիական-տնտեսական նորմայի հարաբերությունների ձեռք մեկնում բայլընկերին:

Իսկ յերեկ նույն այդ բայլընկերին բուրժուա-

կտն թերթիրը նկարագրում եյին վորպես «բարբառուների, ավաղակների» և այլն:

Խորհրդային Միությունը ճանաչելու ամենից համառ հակառակորդը ֆրանսիական բուրժուազիան երբ Բայց նա ևս զիջեց: Անցած աշնանը Ֆրանսիայում կառավարության զլուխ անցավ բուրժուական ճախբղոկը Երրոյթի ղեկավարությամբ. այդ կառավարությունը պաշտոնապես ճանաչեց բանվորա-գյուղացիական իշխանությունը: Ֆրանսիան Արևմտյան Յեղրովայի վերջին խոշոր պետությունն եր, վոր պրոլետարիատի ղեկառատուքայի որինավորությունն ընդունեց:

Խորհրդային իշխանությունն ամբողջ յոթ տարի կյանքի և մահու համառ կոիվ մղեց բուրժուական աշխարհի գեմ: Պաշտրման, զինական միջամտության (ինտերվենցիա) տնտեսական բոյկոտի այն քաղաքականությունը, վոր իմպերիալիստական պետությունները մզում եյին առաջին սոցիալիստական հանրապետության գեմ՝ խորտակվեց: Այդ քաղաքականությունը տեղի տվավ «նորմայլ հարաբերությունների» քաղաքականության:

Այդպես եր զրությունը 1924թ. աշնան սկզբին:

Բայց անմեղ ու անհեռատես պիտի լինել կարծելու համար, թե հնարավոր ե ամբողջովին ու լիովին, տեղականարեն, ընդմիշտ «նորմայլ հարաբերություններ» տանդել Խորհրդային Միության և իմպերիալիստական աշխարհի միջեւ: Այդ անհնար ե, վորովհետեւ խորհրդային իշխանությունն ու իմպերիալիստական սիստեմը մեկը մյուսին հակառիր, մեկը մյուսին ջնջող յերեսույթներ են: Այդ բխում ե նրանց եյությունից:

Խորհրդային Միության գոյության փաստը մեծ վտանգ և իմպերիալիզմի համար:

Այդ այդպես և կ գրանով ել պիտի բացատրել այն, վոր վերջին ամիսների ընթացքում բուրժուական Յերազայում տեսմում ենք մի նոր ալիք՝ ռեակցիա, հակախորհրդային ու հակակոմունիստական մի ուժեղ շարժում: Այդ շարժման գլուխ և անցել անգիտական պահպանողական կառավարությունը, վորը ամենահետագի տակեմ ու կատաղի, ջննոյական տիպի իմպերիալիստների կտորավարությունն եւ: Բոլորինի այս կառավարությունը հրաժարվեց իրեն նախորդ մենչեկցան «բանվորական» կառավարության ղերքից Խորհրդային Միության վերաբերմաբ և ըսնեց բացասական քաղաքականության ուղի: «Զենովիկի նամակի» խարդախ պատմությամբ ընտրական պրովակացիա առաջցնելով և տիրանալով կառավարական զահին, անգիտական պահպանողականներն այսոր ըստ յերեսույթին փորձ են անում համակերպական մի ընդհանուր ֆրոնտ կազմել Խորհրդային Միության գեմ:

Նրանք ուղում են վերականգնել կերպոնի և Պուանկարենի սնանկացած քաղաքականությունը:

Բոլորինի կառավարության հակախորհրդային քաղաքականությունը, ի միջի այլոց, հետեանք և նրա, վոր Սնովիայի զաղութային շահերը լուրջ վտանգված են: Անզիւական իմպերիալիստները շատ լավ գիտակցում են, վոր յերեկվա նման ապահով չեն նրանց տիրապետության ղերքերը գաղութային յերկրներում: Անա գասահերը Անգլիական ինտրիգները անհաջող են անցնում: Թյուրքիայում: Յեղիպտոսում սպանվեց Ժեներալ Լի Ստեկը. հուզված և Միջագետքը, անգլիական

ինտրիկներով կաղմակերպված շեյխ և յեղալի առըստամբությունը ընդեմ Պարսկաստանի ազգային կառավարության՝ խորտակվեց. նման մի ապստամբություն պարտվեց Աղվանիստանում. հեղափոխության պիքները բարձրանում են Հնդկաստանում. Զինաստանի աղատագրական կովի վերջին նշանակալից գեղքերը—այդ բոլոր փաստերը լրջորեն փորփորում են անգլիական տիրապետության հիմքերը Արևելքում:

Լոնդոնի բանկերները այդ գոտում են: Նրանք ըշգում են և շատ լավ գիտեն և այն, վոր հեղափոխության բարձրացող Արևելքի համար Խորհրդային Միությունը բարոյական հենարան և իր անշահախնդիր քաղաքականությամբ դեպի տրորված ու հարստահարգող ազգերը: Խորհրդային Միության գյուղացիների հեղափոխական կոփիք և հաղթանակը, նրանց գաշը բանվոր դասակարգի հետ որինակ և Արևելքի գյուղացիության համար: Յեղիպտոսի, Պարսկաստանի, Հնդկաստանի ու Զինաստանի ազգային հեղափոխական բուրժուազիան անգամ, մանավանդ նրա մանր-բուրժուական թեր հակիմպերի հիմքամբ կատարված պայքարում վորոշ չափով որինացիա ունին դեպի խորհրդային կառավարությունը:

Խորհրդային Միությունը այն միակ ուեյալ ու կայուն ուժն է, վորն իր քաղաքական-հեղափոխական հմայքով ժողովրդների աշխում, իր անշահախնդիր քաղաքականությամբ կարող և մեծապես նպաստել և նըպաստում և այն կովին, վոր արևելյան ժողովրդները սկսել են ընդեմ իմպերիալիզմի, մասնավորապես ընդեմ անգլիական իմպերիալիզմի:

Սյատեղ և շան դլուխը թաղված: Անգլիական

պահպանողական կառավարության նոր հակախորհը դային գծի հիմքն այսուեղ պիտի փնտոել Դրանով պիտի բացատրել, թե ինչու Բոլովինի կառավարությունը հրաժարվեց Մակղոնայլդի և ընկ. Մակովսկու ստորագրած 1924 թ. ոգոստոսի 8-ի Անգլո-Խորհրդային պայմանագրեց և այն, վոր արտաքին գործերի մինիստր Չեմբերենը ճանապարհորդություններ և կատարում դեպի Պարիզ և Հռոմ, մատերը շարժում Բարկաններում և Մերձ Բալտյան յերկրներում: Այդ բոլորով գործեր են արվում ընդհանուր Փրոնտ կազմելու համար բայց կիկների գեմ:

Սակայն Խորհրդային Միությունը շատ լավ ծանոթ և կոյդ-Զորջի ու Կերպոնի վաղեմի այդ քաղաքականությանը: Բոլորս հիշում ենք, վոր Հոկտեմբերյան հեղափոխության հենց առաջին որերից նման քաղաքականություն եր տարվում մեր դեմ: այդ քաղաքականությունը խայտառակ կերպով հաղթվեց: Բանկուրա-գյուղացիական առաջին պետությունը իմպերիալիզմի դեմ մասնավորապես անգլիական «խաղաղ» ու զինական հարձակումների դեմ կազմակերպեց վիթխարի դիմագրություն: Յեկ այդ կովում հաղթվողը Խորհրդային աշխարհը չեր: Մեր հաղթանակին նպաստում եր և այն, վոր անհաշտելի հակասություններ կան իմպերիալիստական պետությունների միջև:

Խորհրդային աշխարհի վաստամաններում այսոր ավելի շատ վառող կա, քան 1918—20 տարիներին, նրա բազուկներում ավելի շատ ուժ, նրա անսօնական միջոցներն ավելի շատ են, քան նախկին տարիներին: Մյուս կողմեց մեր գաշնակիցն է բուրժուական աշխարհի պրոլետարիատը, վորը որ-որի վրա հեղափոխականանում եւ:

Խորհրդային Միությունը հաստատ շարունակում է ընկ. Անխի ավանդած արտաքին քաղաքականությունը՝ խաղաղ տնտեսական ու քաղաքական նորմայլ փոխարարելություն հաստատել բուրժուական պետությունների հետ, պաշտպանել Արևելքի ճնշված ժողովրդներին և բոլոր միջոցներով դիմագրել մեր դեմ ուղղված հարձակումներին:

Լավ իմանալով բուրժուազիայի ախորժակները՝ նրա հարձակումներին դիմագրելու համար կազմ ու պատրաստ պետք եռ ունենալ կարմիր Բանակը: Բուրժուական գիտլումատիան հարգում ե միայն ուժը, իսկ կարմիր Բանակը բավական համոզիչ ուժ ե:

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Միությունը արտաքին թշնամիներից պաշտպանելու, նրա հետագա զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ եռ ունենալ վոչ միայն կարմիր բանակ, այլ և պահանջվում ե զարդարնել ամրացնել մեր տնտեսությունը՝ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Առանց տնտեսական պատվանդանի ամրացման չենք կարող ապահով դարձնել Խորհրդային Միության գոյությունը:

Անցած տարվա ընթացքում մեր տնտեսության վերականգնումն ուժեղ ու հաստատուն քայլերով գրնացել ե դեպի առաջ, Չնայած մասնակի յերաշտին, չնայած վոր բուրժուական աշխարհից չստացանք և վոչ մի նյութական աջակցություն, չնայած մի շարք ուրիշ հանգամանքների գոյության, բայց և այնպես

մեր տնտեսական զարգացումը անցած տարվա ընթացքում ունի շոշափելի, ուրախացնող դրավումներ:

Ֆինանսները չեվ պետական բյուջե։—Այս տարվա ընթացքում հաջողվեց վերջնականապես ամրացնել կայուն գարձնել մեր զրամը, չերպանեցը: Դա մի այնպիսի հաղթանակ եր, վորի մասին տարի ու կես, յերկու տարի առաջ, գժվար եր յերազել անգամ: Մի տարի առաջ շրջանառության մեջ ունեցինք ընդունենը 264 միլիոն չերվանեց սուբլի, այժմ այդ գումարը հասել ե 700 միլիոն սուբլու, այսինքն ավելացել ե յերկու ու կես անգամ: Կայուն վալյուտան մեզ հնարավորություն ե տալիս առաջին անգամ խորհրդային իշխանության ժամանակ կազմել ամուր, տարեկան հաստատուն բյուջե: Համամիութենական ընդհանուր բյուջեն 1924—25 տարվա համար հավասար ե 2 միլիարդ 272 միլիոն սուբլու:

Սցդքան գումար մենք կարող ենք մախել նույն չափով ել մուտք պիտի ունենանք, քանի վոր պետական բյուջեն կազմված ե առանց դեֆիցիտի: Այդ 2 միլիարդ 272 միլիոն սուբլի մուտքից միայն 340 միլիոն սուբլ. ե հավաքվում գյուղատնտեսական հարկի միջոցով: 2 միլիարդից ավելի պիտի հավաքենք այլ ազրյուններից: Մյուս հարկերից մուտք սպասվում ե մոտ 1 միլիարդ սուբլ.: Բոլոր հարկերի գումարը բաժանելով ժողովրդի թվի վրա՝ մարդագլուխ զավս ե 7 սուբլ., այն ինչ պատերազմից առաջ սուսական կայսրության ամեն հպատակ հարկ եր տալիս 11 ո. 20 կոպեկ: Մնացած 1 միլիարդը պիտի գանձի պետական ձեռնարկություններից, արտաքին առևտրից, յերկաթուղուց և այլն:

Պետական ծախսերի մեջ, համեմատած նախկին տարիների հետ, նկատելի տեղ է բռնում ժողովրդական լուսավորությունը, վորին հատկացվում է 250 միլիոն ռուբլի. (Խորհրդային Հայաստանի բաժինուը Խ. Ս. Հ. Միության յելքի մեջ հասնում է 12 միլիոնի): Ըստ հանուր առմամբ Խորհրդային Միության պետական բյուջեն, համեմատած նախկին տարիների հետ, ավելանում է 350 միլիոնով կամ 20 տոկոսով։ Այսպիսով ունինք հավասարակշռված պետական յել ու մուտք և բոլորովին հրաժարվել ենք եմիսիայից, նոր թղթադրամ պատրաստելու իրավունքից։

Կայուն դրամական սիստեմ և ամուր, հաստատուն պետական բյուջեն, ահա այն խոշոր գրավումը, վոր մենք ունինք այս տարի և վորը հիմք դարձնելով կարող ենք լուրջ կերպով զարգացնել Խորհրդային արդյունաբերությունը։

Սրբյունաբերության յերեք զլամագոր նյութը կաղմում են մանվածքագործությունը, մետալարդյունաբերությունը և վառելիքի՝ նավթի ու քարածուխի արտադրությունը։

Սրբյունաբերության այդ յերեք զլամագոր ճյուղերի զարգացման նշանները հանրապետության առնատեսականի ընդհանուր առաջադիմության նշան կարող են համարվել։

Մանվածքի արդյունաբերության ճյուղու արտադրում և առաջին անհրաժեշտության իրեր, վորոնց սպառումը բարձրանում է այն չափով, ինչ չափով վոր բարձրանում և ժողովրդի բարեկեցությունը։

Ահա մի քանի թվեր մանվածքի արդյունաբերության մասին։ 1920 թ. մանվածքի գործն ընկել եք

5 տոկոսի, նախապատերազմական վիճակի հետ համեմատած։ Այժմ նա բարձրացել է 55 տոկոսի։ 1920 թվին գործող ինֆիների թիվը 300 հազար եք, 1921—22 տարիներին մոտ 2 միլիոն, 1923—24 թ.—3 միլիոն։ Խոկ 1924—1925 թ.—չորս և կես միլիոն։ 1920 թ. գործածվել է մոտ 800 հազար փութ մանվածք, 24 թ. 6 միլիոն փութ, խոկ 24—25 թ. հարկավոր և 9 միլիոն փթից ավելի, 22—23 թ. պատրաստվել են 650 միլիոն մետր չիթ, 24—25 թ. 1 միլիոն 300 միլիոն մետր։ Նույնպիսի թվեր ունինք նաև վուշի ու բրդի գործվածքների վերաբերմաբ։

Մանվածքի արդյունաբերությունը կատարյալ լարգածության հասցնելու համար այս տարի Ամերիկայից պիտի ներմուծենք բամբակ մոտ հարյուր միլիոն փոսկի ուռեղլու արժողությամբ։

Դեռ շատ անելիք ունինք այս առարկակում։ Պատերազմից առաջ նախկին ուսւական կառավարության մեջ մարդագլուխ սպառվում եք 25—27 արշ. չիթ. այժմ մենք պատրաստում ենք ընդամենը 12—13 արշին. խոկ Յելվոպայում սպառում են մինչև 50 արշին։ Պարզ է, վոր շատ ու շատ անելիք ունինք այս տեղի։

Խորհրդային Հայաստանում (Լենինականում) նույնպես արգեն սկսել ե աշխատել մի մեծ մանաբան, վորն այժմ ունի 150 բանվոր, քիչ ժամանակ հետո կունենա 400, խոկ մի տարուց հետո ել աշխատանք կտա մի քանի հազար բանվորների, լենինականի մանաբանը պիտի այնպես դրվի, վոր կարողանա սպառել Հայաստանի ամբողջ բամբակը, լենինականի մանաբանը Հայաստանը նվեր ե ստոցել իվանո-Վազնեսենսկի բանվորներից։

Մեսալագործական արգյունաբերությունը միասպեսության ժամանակ աշխատնել և գլխավորապես յերկաթուղիների, նավագնացության և ռազմամթերքի պատրաստության համար:

Նախապատերազմական շրջանի չափերով այժմ պատվեր տալ յերկաթուղիների կամ ռազմական կարիքների համար անկարող ենք, միջոցներ չունինք: Ահա թե ինչու մեծ դժվարությունների հետ և կապված մետալարդյունաբերության բարձրացման խնդիրը: Սակայն և այնպես այս ասպարեզում նույնպես ունինք շոշափելի գրավութիւներ:

Անցած տարի մետալարդյունաբերությունը կատարել է 195 միլիոն ռուբլու աշխատանք, այս տարի նրա ծրագիրն է 273 միլիոն, հաշված նախապատերազմական գներով: Յեթե այս գումարը վերածենք այժմյան գների՝ կստանանք մոտ 400 միլիոնի աշխատանք, Այս տարի մետալարդյունաբերությանը աըրվում է 40 միլ. ռուբ. նպաստ և 60 միլ. ել վարկ պետական բանկի միջոցով:

Հայաստանի պղնձահանքերի և գործարանների վերականգնումը մտել և մետալարդյունաբերության բարձրացման ընդհանուր ծրագրի մեջ: Ալտիերգու և Ղարդարի (Զանգեզուրի) պղնձահանքերի համար Խորհրդագործության միջոցներից հատկացված են մեկ միլիոն 100 հազար ռուբլի: Այդ գումարով բանի կը պըսի հայաստանի արդյունաբերության համար այն քան մեծ նշանակություն ունեցող այդ հանքերը:

Այժմ Զանգեզուրի հանքերում աշխատում էն 600 բանվոր, իսկ մոտ ամենների ընթացքում այդ թիվը պիտք և կրկնապատկվի:

Պղնձի արտադրության և մշակման գործը մոտ առնջություն ունի եկեղեցափեղացիայի հետ: Խորհրդագործության Միության բոլոր անկյուններում կատարվում են յեռանգույն աշխատանք այս ուղղությամբ: Խորհրդագործության հայաստանը նույնպես մեծ աշխատանքներ և կատարել այս մաքով: Յերեանի հիդրոելեկտրոկայանի կառուցումը մոտ ե ավարտման, նա պիտի բացվի այս տարվա ամառը և կունհնա առաջմ 2500, իսկ մոտ ապագայում 7000 ձիու ուժ:

Ծրագրվում ենոր կայարանի կառուցումը Լենինականում 3000 հազար ձիու ուժով: Իջևանի գավառում և մի քանի ուրիշ վայրերում ծրագրվում են հիդրոելեկտրական կայարաններ կառուցել:

Ըսկ լենինի ծրագրը՝ յելեքտրոփեղացիայի յենթարկել Խորհրդագործություն՝ հաստատում քայլերով իրականացվում է:

Եավք, Բարածուխ.—Վասելիքի այս յերկունյութերով շատ հարուստ ե Խորհրդագործությունը: Մի քանի տարի առաջ վասելիքի կրիզիսը ծանրադրույն խնդիր եր, բայց այժմ նա լուծված է հիմնովին, այնքան, վոր նավթի ու քարածուխի մեծ ավելցուկներ ունենք արտահանելու համար: Քարածուխ 1922 թ. արտադրել ենք 525 միլիոն ֆութ: 1923 թ. 746 մ. ֆ. 1924 թ. 902 միլիոն ֆութ և 1925 թ. ծրագրի ունենք 934 մ. ֆ.: Այս քանակը միանգամայն բավ է ներքին կարիքների և վորոշ չափով ել արտահանելու համար: Նավթ 1922 թ. արտադրվել է 296 միլիոն ֆութ, 1923 թ. 330 միլիոն ֆութ, իսկ 1924 թ. 365 մ. ֆ.: Իսկ 1925 թ. 411 մ. ֆ., վարից տաօնյակ միլիոն ֆութ կարող ենք արտահանել:



Ընկ. Կամենելը տնտեսական խնդիրների նվիրած
իր վերջին ճառերից մեկում եւ, «Անցած 1924 թ.
հոկտեմբեր ամիսը պիտի համարել ունկորդային, գերա-
զանց իր արդյունքներով մեր տնտեսության համար:
Այդ հոկտեմբեր ամսին թե արտադրության տապա-
րիզում, թե առնարական շրջանառության ու յերկա-
թուղիների, և թե ապրանքների տարածման ասպարի-
զում մենք հասել ենք այնպիսի բարձր չափերի, փոր-
պիսին յերբեք չի յեղել խորհրդային իշխանության ժա-
մանակ»: 1924 թ. հոկտեմբերի թվերը համեմատած 1923
թ. հետ բարձր են 40 տոկոսով: Ընկ. Կամենելը իրա-
վացիորեն յեղբակացնում եւ, «Մենք նկատում ենք, վոր,
այսուղ զօշ թե ինչ վոր պատահական յերեսույթ եւ, այլ
սիստեմատիկ, անշեղ արգեն վարոշակի կերպով արաւ-
հայտված վերականգնումն ժողովրդական տնտեսու-
թյան արդյունաբերության բարձրացումը, յերկաթու-
ղիների կանոնավորումը, ապրանքների շրջանառության
և տնտեսական գործարքների մեծացում և այլն: Դրան
զուգընթաց նկատում եւ հաջողությունների ոլլոցես
նաև աշխատավարձի շրջանում, կատարվում եւ նաև
աշխատանքի արտադրականության բարձրացում: Եթե
այդ բոլորը կատարվում եւ այն խոր ճնշդքացքի ֆոնի
վրա, վոր առաջազրեց յերաշտը մեր ժողովրդական
տնտեսության մեջ»: Արդյունաբերության ասպարի-
զում այս մեկ տարվա ընթացքում, յերբ չի յեղել այլ
ևս ընկ. Լենինի անմիջական ղեկավարությունը խոր-
հարային իշխանությունն ունի, ինչպես տեսանք, շո-
շափելի, բավական շղագիբելի արդյունքներ:

Սյժմ անցնենք մեր ժողովրդական տնտեսության
մյուս հիմնական ճյուղին:

Գյուղատնտեսություն.— Խորհրդային Միության
բնակչության 85 տոկոսը, 130 միլիոնից մոտ 100 մի-
լիոնը, պարապումն հողագործությամբ 100 միլիոն դյու-
զացիների անտեսությունը մեր ժողովրդական տնտեսու-
թյան հիմնական բաղան եւ, վոլով իմակերիալիստական
պատերազմի և քաղաքացիական կոփլարի ըն-
թացքում ամենախորը անկման վիճակի հասավ: Բայց
սկսած 1922 թ. գյուղատնտեսությունը անընդհատ
վերականգնում է, թեակեա և ունեցանք 1921 թ. մեծ
և 1924 թ. փոքր, բայց և այնպես բավական զգալի,
յերաշտները: Նախապատերազմյան վիճակի հետ համե-
մատած հոգագործությունը (հաշվելով բերքի քանակը)
առնվազն 70 տոկոսով, իսկ ցանքսերի տարածությունը
88 տոկոսով վերականգնված է, այն ինչ արդյունաբերու-
թյան վերականգնումը արտահայտվում և առաջմմ մի-
այն 50 տոկոսով: 1923-24 թ.թ. Խորհրդային Միու-
թյան մեջ ցանքսերի տարածությունը աճել է 7,1 տո-
կոսով: 1924-25 թ. աշնանացանը, նախնական տվյալ-
ների համաձայն՝ աճել է 5 տոկոսով համեմատած նախ-
կին տարվա հետ: Ցանքսերի աճման ընդհանուր յե-
րեսույթի հետ միաժամանակ նկատվում եւ նաև կույլ-
տուրական բույսերի ցանքսերի աճումը: Այս տես-
նում ենք նաև Հայտատանում, ուր խաղողի և առանձ-
նապես բամբակի մշակությունը նոկայական քայլերով
առաջադիմում է: Բամբակի ցանքսի տարածությունը
1922 թ. հավասար եր՝ 500 դիսյատինի, 1923 թ.
4,500 դ., իսկ 1924 թ. 15 հազար դեսյատինի:

Ազրբեջանում, Թուրքիստանում նույնպես բամ-
բակագործությունը շատ արագ կերպով զարգանում է: Արագ կերպով առաջադիմում եւ նաև վուշ և կանեփի
մշակությունը Ռուսաստանում:

Միաժամանակ նկատվում են նաև գյուղատնտեսա-
կան կոլեկտիվ տնտեսությունների և կոոպերացիայի
զարգացումը: Նրանց առաջադիմում մասին վկայում են
այս թվերը: Կոլեկտիվ տնտեսությունների և կոոպերա-

տիվսերի թելը 1921 թ. հավասար եր 13 հազարի, 22 թ. 18 հազար, 23-ին 25 հազար, իսկ 1924 թ. հուլիսին արդեն 31 հազար: Խորհրդային Հայաստանում միայն կաթոնատնտեսական արտելների թիվն արդեն հասնում է 38, իսկ մյուս տեսակի՝ գյուղատնտեսական ընկերությունների հետ միասին գյուղատնտեսական կոոպերատիվների ընդհանուր թիվն է 70:

Ըստհանուր առմամբ գյուղատնտեսության վիճակը այս պատկերով ե ներկայանում. ցանքսերի տարածությունը աճում է, դյուղատնտեսության կույլտուրան բարձրանում է, աղքատ և միջակ գյուղացիությունը մեծ ձգում ե ցույց տալիս գեղիկ կողմելով և կոոպերատիվ տնտեսություններ: Գյուղացիությունը արդեն ձեռք ե բերել բարեկեցություն: Դրա լավ նշան կարող ե համարվել ապրանքների այն մեծ պահանջը, վոր արդեն ունի գյուղը: Ամենուրեք զգացվում է ապրանքների սովությունը վայլուտան, հացի գների բարձրացնումը և տեխնիքական բույսերի՝ խաղողի, բամբակի, փուշի այս տարվա լավ բերքը բարձրացրել և գյուղացու գնողական ընդունակությունը: Գյուղացին ունի ապրանքների հետզհետև բարձրացող պահանջ—ահա հենց այդ հողի վրա ել կատարվում և քաղաքի արդյունաբերության բարձրացումը, վորի ընթացքը հետզհետև պիտի արագանա զուգընթաց հողագործության բարձրացման ընթացքին:

Սակայն գյուղացիների մեծամասնության միջակ և աղքատ տարբերի տնտեսության վիճակը դեռ շատ հեռու յե բավարար լինելուց: Աղքատ գյուղացիների մի սովար մասը չունի շնչավոր և անշունչ ինքնառար, նույնը պիտի ասել վորոշ չափով նաև միջակների մասին: Հողագործությունը վերականգնելու և նրա կույլտուրան բարձրացնելու խնդիրը հիմնական, հերթական մի խընդիր է, վորը դեռ սպասում է իր լուծման:

Այդ խնդիրի լուծման ամենակարճ ուղին եւ տալ գյուղացիներին եժան վայեկ: Մինչև այժմ խորհրդա-

յին Միության կառավարությունը գյուղատնտեսական վարկի համար բաց ե թողել 125 միլիոն ռուբ., իսկ տեղական որգանները և գյուղացիներն ընդամենը 35 միլիոն, վորից միայն 5 միլիոն են գյուղացիք մտցրել: Տեսնում ենք, վոր գյուղացիների մոււծած բաժինը չնշին ե, այն ինչ պատերազմից առաջ համապատասխան թվերի փոխարարերությունն այլ եր:

Սո մեկն հունվարի 1915 թ. գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնական կապիտալի մեջ կառավարությունն ուներ 115 միլ. ռուբլի, իսկ կողմանակի աղբյուրներից կար 800 միլ. ռուբլի: Այս թվերից պարզ է, վոր գյուղատնտեսական վարկի մեծաշման գործում ամենամեծ մասնակցությունը պիտի ցույց տա գյուղացիությունը: Կառավարությունն այս նպատակի համար անսահման քանակով դրամ տալ չի կարող, վորովհետեւ չկա:

Գյուղատնտեսական վարկը սակավ է, բայց յեղածն ել լավ չի կազմակերպված և նրանից հաճախ ոգտվում են վոլ թե աղքատ կամ միջակ գյուղացիները, այլ կուլակները, գյուղի ունեորները: Այս յերեվույթի դեմ կավելու միջոցն այն է, վոր գյուղի խորհրդացին տարբերը՝ աղքատ և միջակ գյուղացիները կազմակերպվեն, վոր նրանք ցուցանանեն ինքնագործունեյություն: Աղքատ և միջակ գյուղացիների կոռուպտումը և նրանց ակտիվի մասնակցությունը գյուղական խորհրդի աշխատանքներին պիտի առաջ տանել: Կոռպերացիա և խորհրդական ահա այն նախնական ըջիչները, ուր պիտի արտահայտվի գյուղի համարակական յետանդը, գյուղի խորհրդացին տարբերի ինքնապործունեյությունը:

Խորհրդային իշխանության 8-րդ տարում Ռուսաստանում և 4-րդ տարում Հայաստանում, ընկ. Լենինի մահից մի տարի հետո՝ կոմունիստական կուսակցությունը և խորհրդացին իշխանությունը սկսել են գյուղում տարվող աշխատանքի նոր ընջան: Աշխատանքի

այս նոր շրջանի հրամաւրական պահանջն են՝ կազմակերպել գյուղի աղքատ և միջակ տարրերի ինքնագործունեյությունը կոռուպիրատիվի և խորհրդի շուրջը Միայն այն գեպքում, յերբ գյուղացիությունը (հարկավ նրա աղքատ և միջակ տարրերը) կը կազմակերպվի ու յերեվան կրերի ինքնագործունեյություն, յերբ կոսովերատիվի և խորհրդի ըմբիներում կցուցչանի հարկավոր չափով ակտիվություն, միայն այդ գեպքում գյուղի տնտեսական կույլտուրական զարգացումը կարագանաւ Գյուղացիությունը պիտի իր իսկ ձեռքերով նպաստի գյուղատնտեսական կույլտուրայի բարձրացմանը, կազմակերպի պետություն կառավարելը։ Յեվ այս մտքով գեռ հսկայական անելիքներ կան։

Կոմունիստական Կուսակցությունը և խորհրդացին իշխանությունն այժմ այդ քաղաքականությունն են վարում գյուղում, առաջնորդվելով լինինյան ավանդներով։ Ընկ. Լենինն եր, վոր իր քաղաքական—հեղափոխական գործունեյության հենց առաջին որերից չեր հոգնում քարոզելուց, վոր պրոլետարիատի հեղափոխական կովի ամենալավ գաղնակիցը աղքատ և միջակ գյուղացին ե, վոր չենք կարող անտեսել գյուղացիության շահերը, նրա բազմապիսի պահանջները։ Հոկտեմբերյան Հեղափոխության հաղթանակը և նրա հետագա զբաղությունը հենվում են և կարող են հենվել պրոլետարիատի և աղքատ և միջակ գյուղացիների դաշնակցության գրաւելարիատի և աղքատ ու միջակ գյուղացիների դաշնակցության գրաւելարիատը չե կարող իր զիկուտուրայի հարատեսը թյունն ապահովել։ Լենինյան հեղափոխական ուսումունքը այս և մեղ թելաղբում։ Այս գիտակցությամբ և, վոր խորհրդային իշխանությունն այսոր իր քաղաքականության զննքը դարձել և զետի գյուղը, զետի աղքատ և միջակ գյուղացիների կազմակերպման ու ինքնագործունեյության աշխատանքը։

Ընկ. Լենինը առաջինն եր Մարքսի աշակերտներից, վոր ամբողջ մեծությամբ առաջազրեց և թերթա-

ովես ու գործնականապես ճշտորեն լուծեց այն խնդիրը, թե գյուղացիությունն ինչ դեր ունի կոմունիստական հեղափոխության մեջ։ Ընկ. Լենինի մահից հետո նրա ժառանգ կոմունիստական կուսակցությունը շարունակում է նրա ուղին։

Խորհրդային Միության մասշտաբով մեծ աշխատանքներ են կատարված գյուղատնտեսական կույլտուրան բարձրացնելու համար։ Այդ նպատակով գործադրվեց տասնյակ և հարյուրավոր միլիոններ։ 1921 թ. և 1924 թ. յերաշտից տուժած դյուլացիների տնտեսությունը փրկելու համար մախված են բազմաթիվ միլիոններ։ Վերը մենք տեսանք, վոր միայն վարկի միջոցով գյուղացիներին տրված և 125 միլիոն ուռելի։

Խորհրդային Հայաստանի կառավարությունն իր հերթին մեծ աշխատանքներ և թափել գյուղի տնտեսությունն ու կույլտուրան բարձրացնելու համար։ Հարյուրավոր վերսա յերկարությամբ հին առուներ են վերականգնած ու նորերը փորված, կառավարության նյութական ոժանդակությամբ մեռած վիճակից բարձրացավ այդեզրծությունը, մանավանդ բամբակագործությունը։ Այս տարվա համար ունինք 800 հազար սուրբի վոռոգման զործի և ճահիճները չորացնելու համար։ Դյուլատնտեսական կույլտուրան, մասնավորապես կաթնատնտեսությունն ու անասնապահությունը բարձրացնելու համար վերջին ժամանակներում կատարվում են յեռանդուն ջանքեր։

Ընկ. Լենինի մահվան առաջին տարեկարձի ուրերին Խորհրդային Հայաստանի գյուղը կատարում է խորհուրդների վերընտրություն։ Կոմունիստական կույլտուրային և խորհրդային իշխանության անմիջական զեկավարությամբ մեր գյուղինորդները իրենց շուրջը կամամիմբեն աղքատ ու միջակ գյուղացիների զործոն, զիտակեց ատարերը։ Նրանց մոտ աշխատակցությամբ խորհուրդներն այսուհետև կրկնակի մեծ զործ կատարեն գյուղի տնտեսական հասարակական կյանքը բարձրացնելու համար։

ԿՈՄԻԿՆԵՍՑՈՒԹՅՈՒՆ ԿՈԽԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԳԼՈՒԽԻՄ ՏԵՇԵՐ ՄԱՀԱՅ ՀԵԶՈ

Ընկ. Լենինի գաղափարական ժառանգն է կոմունիստական կուսակցությունը, պողպատե Ռ. Կ. Պ., վորի մեծ դարբինն եր Վազգիմիլի իլլիչը: Կոմունիստական կուսակցությունն ե ընկ. Լենինի մարտական հեղափոխական ուսմունքի զինակիրը, խորհրդային իշխանության զեկավարու առաջնորդ կազմակերպությունը: Յեթև ճիշտ լիներ վիրը ճիշված ֆրանսական բուրժուական թերթի կարծիքը, թե «Լենինը սրբազն հովվապես եր», իսկ նրա հետեւողները «սովահար մասսաներ» — ապա ընկ. Լենինի մահը լրում, կազմակերպությունը առաջին հերթին պիտի առաջացներ հենց կոմունիստական կուսակցության շարքերում: Յեթև ճիշտ լիներ և այն կարծիքը, թե ընկ. Լենինի մոտիկ աշխատակիցներն ու աշակերտները կարող են յենթարկվել այլասեռման ու իրենց հետ այլասեռել և ամրուզ կուսակցությունը, կատարել որճասական սխալներ, յեթև կուսակցական ոպողիցիայի այս կարծիքը ճիշտ լիներ, ապա այս մի տարին ել բավական եր, վարպեսզի կուսակցության մեջ սկսվեր կազմակերպություն, մտքերի մեջ տատանում:

Պատկերը բոլորովին հակառակն ե: Ընկ. Լենինի մահը խորը ցնցեց անկուսակցական բանվորների մասսաներին և սկսվեց մի չտեսնված մեծ շարժում գեղի կոմունիստական կուսակցության շարքերը Ծեր և յերիտասարդ, զրագետ և անդրագետ հարյուր հաղարավոր բանվորներ խուսն շարքերով բախեցին կուսակցության դոները: Ընկ. Լենինի մահով կուսակցության մարմնի վրա առաջացած մեծ բացը յեկան ծածկելու հարյուր հաղարավոր պրոլետարներ: Դա արհեստական, շինձու, վերուստ թելաղրգած շարժում չեր, այլ խորը որդանական, տարբերային մի հոսանք, վոր սկսվեց բանվորական զանգվածների ծալքերում:

Լենինյան գորակուց: — Ընկ. Լենինի մահվան

թաղման պատմական որերից հետո մինչեւ մայիսի մեջը, այսինքն ընդամենը յերեք ամիսների ընթացքում 258 հազար բանվոր հայտարարություն տվին կուսակցության մեջ մտնելու համար: Այս թվից 128 հազարը (վորից 278 բանվոր հայտարարանում) բարվարեցին այն բոլոր պահանջներին, վոր ունի կուսակցությունը նրա շարքերը մտնել ցանկացողներից և գրգին կուսակցության անդամի թեկնածուները: 128 հազար բանվոր, դա մի հակայական: բանվորական զրարանակ եր, վոր յեկավ մտավ մեր կուսակցության մեջ: Հիշենք, վոր առ 1-ն հունվարի 1924 թ. կուսակցության անդամ բանվորների թիվը համառում եր 150.238-ի, իսկ թեկնածուների թիվը 46.101-ի, ընդամենը 196.339. դա կազմում եր կուսակցության անդամների և թեկնածուների ընդհանուր թվի 44 տոկոսը:

Կուսակցության անդամ մյուս սոցիալական խըմբերը կազմում ելին մեծամասնություն՝ զյուղացիները 28,8%/₀, ծառայողները և այլն — 27,2%/₀ — ընդհանուր 56 տոկոս:

Լենինյան զօրակուցը պատկերը փոխում ե. 1924 թ. մայիսի 1-ին բանվորների տոկոսը կուսակցության մեջ, հազվելով նաև լենինյան զորակոչը, հասնում ե արդեն 55,4 տոկոսի, զյուղացիների տոկոսը իջնում ե 23-ի, իսկ ծառայողներները և այլն 21,6%/₀: Այս թվերը բավական պերճախոս են և վկայում են կուսակցության բանվորական կարերի անընդհատ շատացման մասին:

Լենինյան կուսակցության ուժի և կենսունակության մի ուրիշ զորեղ ապացույց կարելի յե համարել այն խիստ ու միաբան գիմաղբությունը, վոր ավավ մեր կուսակցությունը նրա հիմունքը՝ լենինիզմը վերաընտրելուն, ուղիղիայի յենթարկելու փորձին: Բայլշեկմի հիմքերը տառանելու այդ փորձը կուսակցության կողմից յենթարկելոց բուռն զատապարտության: Կուսակցությունը մնում ե հաստատուն իր գրանիտի պատվանդանի՝ լենինիզմի վրա:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱԾԻՈՆԱԼԵ

Լենինիզմի դրոշակի տակ և այսոր զարգանում նաև կոմունիստական ինտերնացիոնալը: Յեվրոպայի և Ամերիկայի կոմունիստական կուսակցություններն այսոր ապրում են մի պրոցես, վոր կոչվում ե բայլլեվիկացում: Բայլլեվիկացման լոգունգ ընդունեց կոմունիստական ինտերնացիոնալի 5-րդ կոնգրեսը, վոր կայացավ 1924 թ. ամառը: Պիտի յուրացնել բայլլեվիկյան կուսակցության թեորիան ու պրակտիկան, նրա աշխատանքի մեթոդները, անլեգալ և լեգալ կազմակերպության ձկուն զուգավորումը: Այդ բոլորը յուրացնելով և գործադրելով միայն բուրժուական յերկրներում պայքարող, անլուր հալածանքներ կրող կուսակցությունները ուժ ու կորով կատանան դիմանալու կապիտալի հարվածներին և կազմակերպելու բանվորա-գյուղացիական մասսաների գրոհը կապիտալիզմի հիմքների դեմ:

Լենինիզմի դրոշակի տակ Լենինգրադի և Մոսկվայի բանվորները կատարեցին Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունը, լենինիզմի դրոշակի տակ այսոր Խորհրդային Միության 130 միլիոն բանվորներն ու գյուղացիները կերտում, կառուցում են իրենց սոցիալիստական հանրապետությունը: Լենինիզմի դրոշակի տակ համաշխարհային պրոլետարիատը՝ ունենալով աղքատ գյուղացիության աջակցությունը կկատարի կոմունիստական հեղափոխություն:

Այսոր, և այսուհետև ամեն տարի, կոմունիստական հեղափոխության անմոռանալի առաջնորդ Լենինի մահվան տարեգարձը մասայական զորատեսի և զորահավաքի առիթ ե լինելու բուրժուազիայի բռնակալության դեմ մարտընչող աշխատավոր մարդկության համար:



ՀԱՅՈ-ԱՐԱ.ՀՀ

ՀՀ Ազգային գրադարան



NL0189409

ԳԻՒԾ 15 4.